/1972-1983 թթ./ դաշտային գործուղումների ընթացքում լինելով շուրջ 42 գյուղում /շրջանն ունի 61 գյուղ, որից վեցն է այլազգի/ գրառել եմ մեծաքանակ տարաժանր բանահյուսական նյութ:

3. Դաշտային հետազոտությունները տարվել են հիմնականում հետևյալ ուղղություններով. ա/բանահյուսության համաժամանակյա և տարաժամանակյա կենցաղավարում, բ/ կենցաղավարում ըստ գյուղերի, գ/ ըստ սեռա-տարիքային խմբերի, դ/ ըստ մասնագիտական խմբերի, ե/ ըստ ժանրերի:

4. Նկատվել են հետևյալ օրինաչափությունները. ա/դասական նյութ ավելի շատ պահպանվել է քնիկ գյուղերում, հիմնականում 60 անց երկսեռ տարիքային խմբերում, բ/ բանահյուսական ժանրերի որոշ տեսակների /հեքիաթ, խաղիկ, երգերի որոշ տեսակներ, առակ/ կենցաղավարումը գնալով նվազում է և, ընդհակառակը, նկատվում է նաև որոշ ժանրերի /գվարճախոսություն, ածորիգմ, ժարգոն/ աճ, գ/ բանասացի մասնագիտությունն ունի կոնկրետ ազդեցություն թե նյութի պատմելաոճի և թե ժանրային ընտրության վրա, դ/ քնիկ և ներգաղթած գյուղերի միջև չկան ակտիվ փոխազդեցություններ, ե/ հավանաբար ժամանակակից ինֆորմացիոն հնարավորությունների պատճառով նկատվում է ֆոլկլորիզմի տարածվածություն:

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հանրապետության այժմյան քաղաքային բնակչության ձևավորումը սերտորեն առնչվում է հայ ժողովրդի մեջ կատարված տեղաշարժերի հետ: Վերջիններս պայմանավորված են ժողովրդի մոտիկ անցյալի իրադարձություններով և հանրապետության ինդուստրալիզացիայի բարձր տեմպերով, որի արդյունքն է Հայկական ՍՍՀ քաղաքային բնակչության թուն աճը, որը 60 տարվա ընթացքում ավելացել է ավելի քան 20 անգամ:

2. Բնակչության տեղաշարժերի ուսումնասիրության համար մասնագետները գործադրում են վերլուծության տարբեր մեթոդներ, որոնցից մեր կիրառած ընտրության ձևի և հարցման եղանակի /ստանդարտիզացված հարցազննումը/ մեթոդն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ այն հնարավորություն է տալիս ստանալու տարբեր տիպի քաղաքների բնակչության տեղաշարժերի առավել ներկայացուցչական պատկերը: Այդ մեթոդի կիրառումը հնարավորություն ընձեռեց պարզելու ընտրված 13

քաղաքի և քաղաքատիպ ավանների /Երևանի, Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Ղափանի, Կամոյի, Հոկտեմբերյանի, Աշտարակի, Իջևանի, Սիսիանի, Բյուրեղավանի, Կալինինոյի և Եղեգնաձորի/ բնակչության վերաբնակ կազմը և կառուցվածքը:

3. Ուսումնասիրվող քաղաքների վերաբնակ կառուցվածքի, զարգացման տեմպերի, ձևավորման ժամանակաշրջանի և այլ գործոնների համադրումը ցույց տվեց, որ քաղաքների վերաբնակ կազմի ձևավորման մեջ նշված գործոնների ազդեցությունը տարբեր է, ըստ որում այդ ազդեցությունը քաղաքային բնակչության ձևավորման պրոցեսի վրա ընդհանրապես ունի համակարգային բնույթ, բայց ամեն մի քաղաքի բնակչության ձևավորման առանձնահատուկ գծերն արտահայտվում են մի կամ մի քանի գործոնների գերակշռությամբ:

4. Այս տեսակետից ուշագրավ է բնակչության ձևավորման բնույթի ազդեցությունը քաղաքներում կատարվող էթնոսոցիալ պրոցեսների վրա:

Յուրաքանչյուր քաղաքի բնակչության մեջ տեղի ունեցող պրոցեսները, տվյալ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման նկարագրից և մշակութա-կենցաղային ինֆրաստրուկտուրայի մակարդակից բացի, մեծ չափով կախված են բնակչության ձևավորման բնույթից, վերաբնակիչ խմբերի սոցիալ-մշակութային բնութագրից:

5. Այսպիսով, քաղաքների էթնոսոցիոլոգիական հետազոտման խնդիրներից կարևորագույնը բնակչության ձևավորման բնույթի ազդեցությունն է սոցիալ-մշակութային պրոցեսների վրա, որը պատշաճ տեղ է գրավում ժամանակակից ազգերի նոր ուրբանիստական պատկերի ձևավորման ուսումնասիրման գործում:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՀՎԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԱՆ ԱՆԵԾՔՆԵՐՈՒՄ

1. Մահվան գաղափարը հայ ժողովրդական անեծքներում դրսևորվում է և ուղղակի /,,Մեռնիս,, , ,,Մահդ տեսնեմ,,/, և փոխանվանված ձևերով: Փոխանվանման դեպքում մահը պատկերացվում է կամ անձնավորված, կամ առարկայացված, երկու դեպքում էլ սերտորեն կապված առասպելաբանական տարբեր հավատալիքների ու պատկերացումների հետ:

2. Մահվան անձնավորումները հանդես են գալիս մի շարք անուններով, որոնցից հաճախադեպ են Գրող /նաև Քոռ Գրող/, Մահ /անձնավորված/, Գրող և Մահ միասին, Աստված, իբրև մահ հարուցող կամ տնօրինող, Հոգեառ /նաև՝ Հոգեառ հրեշտակ/, Գաբրիել հրեշտակ կամ հրեշ-